

Հիմնաւորումներ

*Դասական ուղղագրութեան վերականգնման
գործընթացը աւարտին հասցնելու համար*

Որպէս Մուտք

2011-ի *Հոկտեմբերին*, ըստ մամուլի յայտնած լուրերի, ՀՀ սփիւռքի Նախարար տիկին Հրանոյշ Յակոբեանը ընդունելով այդ ժամանակ հայրենիքում գտնուող կանադահայ լեզուագէտ Է. Կնչինաբան, դոկտ. փրոֆ. տիկին Դորա Սաքայեանին, ուղղագրական հարցերի շուրջ զրոյցի ընթացքում նրան առաջարկել էր *ներկայացնել տեղեկանք՝ Մաշտոցեան հիմքով աւանդական դասական ուղղագրութիւնը վերահաստատելու հիմնաւորումներով*:

Կարելոյ է ճշդել, որ *նոյնիսկ այսօր* դասական ուղղագրութեանը ընդդիմադիր լեզուաբանների կողմից քննադատելի համարուած՝ 1922թ Մարտի 4-ի *աբեղեանական «ռեֆորմը»* լիովին *չի վերացել*: Մանաւանդ անհանգստացնող է Հայաստանում տիրող այն *սխալ եւ անհիմն մտածելակերպը*, թէ՛ 1940-ին լեզուաբան Գուրգէն Սեւակի կատարած լրաւորումներից յետոյ (ինչը գործի միայն շնորհակալ սկիզբն էր), *աբեղեանական խեղագրութիւնը իբր լրիւ շտկուեց եւ այլեւս չարժէ անդրադառնալ ուղղագրական կնճիռին: Մինչդեռ Գ. Սեւակը ինչ-ինչ պատճառներով, 1940-ին միայն մասամբ վերականգնեց աւանդական մեսրոպեան դասական ուղղագրութիւնը, միաժամանակ պահպանելով՝ աբեղեանական գրելաձեւի բազում սխալներ*: Այսպէս օրինակ՝ այբուբենում չվերականգնեց **ւ-(վիւն)** գրանշանը եւ այդ գրանշանը ամենուրեք **վ (վեւ)** –ով փոխարինելը պահպանեց: Տարիմաստ բառերում նման հնչուող, բայց տարբեր գրանշաններով գրուող տառերից միայն մէկը գրելու կարգը պահպանեց, միւսը վերացուեց (**սէր- սեր**, մնաց միայն **սեր ձեւը**, **գէտ-գետ**– մնաց **գետ ձեւը**): Չի ուղղուել բառասկզբում **յ-(հի)** գիրը **հ (հո)**–ով գրելու սխալը (յանձին – **հանձին**), նաեւ այդ **յ- գիրը** բառավերջում չգրելը (ներկայ-ներկա): Պահպանեց *բառամիջում ու բառավերջում Ե* հնչումը **Է**-ի փոխարէն **Ե**–ով գրելու սխալը (տնօրէն-տնօրէն, ափսէ-ափսէ): Եւայլն:

Ակնկալում ենք, որ սփիւռքի նախարարութիւնը կը կարողանայ ներկայացուող տոյն *Հիմնաւորումները* քննարկման նիւթ դարձնել *համահայկական որեւէ համաժողովում*, կամ լսումներ կազմակերպել *Ազգային ժողովի եւ կառավարութեան մակարդակով՝ քննարկուող հարցի կողմնակիցների (ներառեալ սփիւռքից եւ հայրենիքից) եւ դրան ընդդիմացողների մասնակցութեամբ, հաւասար թուով ձայների եւ ձայների հաւասարութեան սկզբունքով*:

Ներկայացուող հաւաքական այս փաստաթուղթը նպատակ ունի հիմնաւորել՝

Ա) Աբեղեանասեւակեան սխալագրութեան բարեփոխման կարեւորութիւնը, Բ) Աւանդական միասնական ուղղագրութեան վերականգնման՝ Գ. Սեւակի սկսած գործը ճշտիւ շարունակելու եւ աւարտին հասցնելու յոյժ անհրաժեշտութիւնը, եւ Գ) Այդ հարցերի առթիւ երկու կողմերի համատեղ հրատապ քննարկումների խիստ այժմէականութիւնը:

Աբեղեանասեւակեան կամ հայաստանեան ուղղագրութեան բարեփոխման հիմնաւորումները

Խեղագրութիւնը պէտք է *բարեփոխել, որովհետեւ*.

ա) *Դասական գրահամակարգի* (այբուբենի եւ ուղղագրութեան) աբեղեանասեւակեան «*ռեֆորմը*» քաղաքական ապագային *ակտ էր* եւ ըստ աշխարհի նշանաւոր լեզուաբանների՝ *լեզուական անհրաժեշտութիւն չէր (1): Իսկ 19-20-րդ դարերում ուղղագրութիւնը փոփոխելու ոչ գիտական արտառոց տարբերակները (2) երբեք չեն ընդունուել ազգի ու մտաւորականութեան կողմից եւ շարունակուել է կիրառուել դասական ուղղագրութիւնը:*

բ) 1922-ից սկսած, խեղագրութիւնը միայն Խորհրդային Հայաստանում ընդունուեց, առանց քննարկելու եւ *հակառակ մտաւորականութեան բողոքների (3)*, քանզի «*ռեֆորմը*» լենինեան «*Լեզուի մասին դեկրետ*»-ից բխող պարտադրանքն էր՝ յանուն դեռեւս չեղած համաշխարհային յեղափոխութեան՝ լատինական գրերին անցնելու համար (4): Ռուս առաջաւոր մտաւորականութեան կողմից քննադատուած լեզուական դեկրետի ոյժով *հայ կոմունիստների պարտադրած խեղագրութեանը դէմ է եղել նաեւ ազգի միւս կէտը՝ ներքին սփիւռքում՝ վրացահայերը, իսկ արտասահմանում՝ սփիւռքահայութիւնը (4ա): Վերջիններս չեն ընդունել եւ պայքարում են դրա դէմ՝ ցայսօր:*

գ) Այդ պարտադրանքի՝ *այսօր մերժելի* քաղաքական նպատակն էր՝ *խզում առաջացնել ազգի երկու հատուածների՝ «սոցիալիստական» արեւելահայերի ու «կապիտալիստական» արեւմտահայերի միջեւ, ինչպէս նաեւ հայաստանահայերին զրկել իր ազգային մշակոյթին, դարաւոր պատմութեանն ու արմատներին հաղորդակցուելուց, նրանց ձուլելու համար ընդհանուր «սոցիալիստական» ազգի մէջ (5):*

դ) Լատինական գրերին անցնելու Կրեմլի նպատակը չաջողելուց յետոյ, Աբեղեանի քաղաքական հովանաւորները *անկեղծօրէն խոստովանեցին*, որ, եթէ չէր իրականանալու լատինական գրերին անցումը, ապա աւելի լաւ է վերադառնալ նախկին ուղղագրութեանը, *ընդունելով, որ «նոր» ուղղագրութիւնը իրականում եղած «հին» ուղղագրութիւնից աւելի վատն էր (6) եւ որոշեցին բարեփոխել, ուղղել այլեւս իմաստ չունեցող խեղագրութիւնը, ինչի վերափոխման համար հինգ տարբեր պետական յանձնաժողովներ ստեղծուեցին (7):*

ե) ՀՀ Անկախացումից յետոյ այլեւս անիմաստ եւ անհիմն է գուտ քաղաքական ստոր, հեռագնայ նպատակներով եւ Կրեմլի «*յոյժ գաղտնի*» նշումով որոշումների պարտադրած «*ռեֆորմը*» պահել կիրառման մէջ, երբ *վերացել է դրա քաղաքական հիմքը եւ գոյութիւն չունի այդ «օրէնքը» պարտադրող Խորհրդային պետութիւնը* (միւս նախկին հանրապետութիւններում նոյնիսկ այբուբենի իրենց նախկին տառատեսակները վերականգնեցին):

զ) «*Ռեֆորմով*» *աղաւաղուել է* դասական ուղղագրութեամբ մեր *դարաւոր աւանդական բառապատկերը*: Այդ բառապատկերները նախնիների անհետացած արտասանութեամբ հնչուող բառերի պատկերներն են, օրինակ, հնում **V** հնչոյթի տարբեր հնչումները պատկերուել են **Վ** եւ **ւ** գրանշաններով, այսօր միայն **վ**-ն ունենք:

է) Նոյնահունչ, բայց տարիմաստ բառարմատները չեն տարբերուում մանաւանդ **Է-Ե, Օ-Ո, Հ-Յ** հնչիւնների դէպքում, երբ դրանք սկսեցին գրել մէկ-միեւնոյն գրանշանով ինչպէս՝ *մեզ* (դերանուն)-*մէզ* (միգել)—այժմ՝ *մեզ*, հոտ (ծաղկի)-*հօտ* (ոչխարի)—*հոտ*, **հանգել**

(մարել)- յանգել (եզրայանգել)—*հանգել*: Արդիւնքում *կորցնում ենք լեզուի շատ բառարմատներ՝ աղքատացնելով մեր բառային ֆոնդը*: Զարգացած լեզուներում նման բան չկայ (8):

ը) «Նոր» ուղղագրութիւնը *գուրկ է տրամաբանութիւնից*, որովհետեւ Սեւակի կարգաւորումը թերի մնաց՝ կիսով չափ պահպանելով աբեղեանի սխալագրութիւնը: Չվերականգնուեց այբուբենի *ւ (վիւն կամ հիւն)* գրանշանը, հետն էլ վերացնելով *իւ* երկհնչիւնը (ինչպէս ֆրանսերէն *Ս* հնչումը): Արդիւնքում այդ երկհնչիւնի փոխարէն *յուն* եռահնչիւնը մտցնելով *ձիւն, սիւն, միւս* եւ նման բառերը սկսեցին գրել՝ *ձյուն, սյուն, մյուս*, որոնք պէտք է արտասանեին գրուած ձեւով՝ *ձըյուն, սըյուն, մըյուս*, բայց *շարունակում են հնչել՝ ձիւն, սիւն, միւս (ինչպէս իւ-ի դէպքում)*: Իսկ *այդ* *ւ*-գիրը դեռ գործածւում են շաղկապներում: Միայլ էր նաեւ երկհնչիւն «*ու*», սղագիր ձեւով «*եւ*» շաղկապները այբուբենում որպէս տառեր համարելը: Այնուհետեւ, այբուբենում վերականգնելով *է-Օ* գրանշանները, լրիւ չվերականգնուեց դրանց դասական գրելաձեւը, երբ Մաշտոցի սահմանումով *Է* հնչումը բառասկզբում *է* գրելը վերականգնուեց (*էշ, էջ, էգ*), բայց *բառավերջում եւ բառամիջում Է*-ով գրելը չվերականգնուեց (դասականով՝ բազէ, Կարինէ, շէնք սակայն գրում ենք բազէ, Կարինէ, շէնք), իսկ դասական *օրէնք* բառի աբեղեանական սխալագրութեամբ *որէնք* գրելաձեւում ուղղուեց միայն *ո-ն՝ վերականգնելով օ գիրը*, բայց ոչ *է-ն՝* բառամիջում *է-ն* թողելով նոյնը (թէեւ *Է* գիրը վերականգնուել էր այբուբենում) եւ *օրէնք* դասական գրելաձեւը դարձաւ *օրէնք, իսկ փաստօրէն* (փաստերի *օրէնքով*) բառը գրւում է փաստ*օրէն*, (մինչդեռ իրենց նոր գրելաձեւի տրամաբանութեամբ գոնէ պիտի գրեին *փաստօրէն՝ ինչպէս օրէնքը*): Լեզուաբաններից մէկը *փաստօրէն* բառի մէջ *օրէն*-ը համարում է *վերջածանց*: Միթե՞ հայերէնում արմատը [*օրէն(ք)*] կարելի է դարձնել վերջածանց: Անտրամաբանական է նաեւ, երբ դասական ուղղագրութեամբ բառասկզբի *յ* գիրը, որը երբեմն չի փոխում բառարմատի իմաստը, փոխարինուեց *հ*-ով (*յանուն* բառի *անուն* արմատը դարձաւ *հանուն*՝ որպիսի բառարմատ չկայ, ունենք *հանել*), նոյնը՝ *յօրինել* (արմատը՝ *օրինել*) բառը դարձաւ *հօրինել*, իսկ *հոր*-ը ուրիշ արմատ է (*ջրհոր*): Նոյնպէս տրամաբանօրէն չի բացատրւում ըստ դասական կանոնի *ա*-ով, *ռ*-ով վերջացող բառերում բառավերջի *յ*-ի վերացնելը, թէեւ այդ *յ*-ն գրւում է այդ նոյն բառի տարբեր փոխակերպումներում. Օրինակ. դասականով՝ *մեղայ-մեղայական, իսկ Գ. Սեւակի նոր ուղղագրութեամբ՝ մեղա (առանց յ-ի)-մեղայական*. որտեղի՞ց եկաւ *յ*-ն: Նմանապէս՝ *անբարոյ-անբարոյական* գրելաձեւը դարձաւ *անբարո-անբարոյական* (ինչու՞ վերջում չգրուած *յ*-ն հիմա գրուեց):

թ) *Անարդարացի է պահպանել աբեղեանասեւակեան «նոր» ուղղագրութիւնը, քանի որ համաշխարհային լեզուագիտութեան մէջ աննախադէպ երեւոյթ է, երբ նոյն ազգի մի հատուածը, ի հեճուկս միւս հատուածի եւ առանց ընդհանուր փոխադարձ համաձայնութեան, ինքնուրոյնաբար փոփոխում է համազգային դարաւոր միասնական գրահամակարգը, ինչը յանգեցնում է երկու տարբեր գրահամակարգեր ունեցող երկու ազգերի առաջացմանը: Մինչդեռ գրահամակարգը համարւում է ազգի միասնականացման նախապայմանը* (9):

ժ) Ստուգաբանական գրահամակարգը հնչաբանականով փոխարինելով, ժողովրդին *պարտադրուեց գրագիտական ցածր*

մակարդակ, որովհետեւ «ռեֆորմ»ի էլակետը անգրագետների համար «դիւրամատչելի» ուղղագրութիւն ստեղծելն էր (գրիւր այնպէս, ինչպէս խօսում ես), ինչն անհրաժեշտ էր բոլշեիկեան պարտադիր ուսուցման (կոչում էր «պարտուս») օրէնքով երկրում «անգրագիտության լիկվիդացիայի» իրականացման համար:

Ի) Քանի որ ուղղագրութեան 1922-40 թ. թ «ռեֆորմը» հին իշխանութիւնների կողմից հռչակուեց «սկզբունքօրէն քննարկման ոչ ենթակայ» քաղաքական ակտ, հետեւաբար դրա վերացումը նոյնպէս պէտք է կատարուի պետութեան քաղաքական հրամանով:

Դասական ուղղագրութեան վերականգնումը շարունակելու հիմնաւորումները

Մենք պարտաւոր ենք պետականօրէն *վերականգնել ու պահպանել* եւ սերունդներին *անխաթար* փոխանցել հայերէնի դարաւոր, համազգային, միակերպ ու միասնական եւ մեսրոպեան հիմքով աւանդուած գրահամակարգը, **որովհետեւ՝**

Ա) Մաշտոցեան գրահամակարգը այդ իրաւունքը նուաճել է մեր ազգապահպանութեան եւ ազգային մշակոյթի մշտական զարգացման հիմքը լինելու եւ քաղաքակրթութեան ակունքներում գտնուող ազգի փորձն ու իմաստութիւնը *ամփոփողի* դերակատարման շնորհիւ:

Մաշտոցեան այդ գրահամակարգով է գրուել մեր պատմագրութիւնն ու գրականութիւնը, փիլիսոփայութիւնն ու աստղագիտութիւնը, նաեւ բժշկական ու այլ աշխատասիրութիւնները եւ իր դասականով գրուած մատենագրութեամբ է այդ ողջ մշակոյթը աշխարհին ներկայացուել:

Բ) 1600-ամեայ այդ գրահամակարգով է իրականացուել աշխարհով մէկ տարտեղնուած մեր ազգի տարբեր ժամանակաշրջանների, տարբեր հատուածների, տարբեր սերունդների կապն ու նրանց ստեղծած *հոգեւոր-մշակութային ժառանգութեան փոխանցումը*:

Գ) Գրաբանական տեսութեան համաձայն *գիրը բառապատկեր է, կարդալը՝ բառապատկերի յիշողութիւն*, հետեւաբար *մեր լեզուական յիշողութեան մէջ դրոշմուած աւանդական բառապատկերը պէտք է պահպանուի*: Այլապէս, փոփոխուած բառապատկերները յաջորդ սերունդները չեն կարող կարդալ եւ հասկանալ:

Դ) Մաշտոցեան գրահամակարգը (ինչն արտայայտում է հայերէնի բոլոր հնչիւնները) իր դարաւոր մատենագիտութեան հետ միասին համարւում է լեզուաբանութեան մէջ ճանաչուած՝ *ստուգաբանական հիմքով ստեղծուած գրահամակարգ*, որի դէպքում *պարտադիր չէ ուղղախօսութեան եւ ուղղագրութեան բացարձակ համընկնում եւ համապատասխանութիւն*, ինչը յատուկ է նոր-նոր գիր ու գրականութիւն ստեղծող լեզուներին բնորոշ պարզունակ (պրիմիտիւ) *հնչական* գրաբանական համակարգին: Ուղղագրական «ռեֆորմը» վերադարձ էր դէպի հնչական տեսութեան, ինչը պարտադրում էր բանաւոր խօսքի *հնչիւնական հիմքի յետագայ ամէն փոփոխութեան հետ փոխել այբուբենն ու ուղղագրութիւնը*: Ահա թէ ինչու, նոյնիսկ այն ժամանակ, երբ գրաբարը դուրս էր եկել գործածութիւնից (12-րդ դար) եւ գերիշխում էր միջին հայերէնը, մատենագիրներն ու գրիչները համարելով, որ գրահամակարգը կարիք չունի փոփոխութեան, *պահպանեցին այբուբենն ու ուղղագրութիւնը*: Այդ գրահամակարգը պէտք է պահպանել, որովհետեւ *անթերի ծառայել է թէ՛ գրաբարին, թէ՛ միջին հայերէնին, եւ թէ՛ աշխարհաբարի արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուաճիւղերին*:

Ե) Մաշտոցեան հիմքով հայերէնի աւանդական գրահամակարգը համարուում է *հնդերոպական մեծ լեզուախմբի նախնական արմատների ու քերականական կառուցուածքի ամենահարազատ ձեւով պահպանուածը եւ դիտուում է որպէս համեմատական լեզուաբանութեան ուսումնասիրութեան հիմք եւ կարելոր աղբիւր*՝ իրանագիտութեան, ասորագիտութեան, յունագիտութեան ու կովկասագիտութեան համար: Հայերէնի այդ կարելորութիւնը չի կարող պահպանել ներկայ խեղագրուած գրահամակարգը:

Զ) Մաշտոցեան գրահամակարգի *միջազգային կարելորութիւնը* կայանում է նաեւ նրանում, որ *անտիկ աշխարհի արժէքաւոր շատ սկզբնաղբիւրների յունարէն եւ լատիներէն կորած ձեռագրերի փոխարէն, դրանց գիտական հետազօտութիւնները* (նաեւ օտարների կողմից), կատարուում են միայն շնորհիւ հայերէնի մաշտոցեան *գրահամակարգով եղած թարգմանութիւնների*:

Կարելոր չէ, թէ դասական աւանդական ուղղագրութիւնը այսօր պահպանող սփիւռքը որքան կը գոյատեւի: Եթէ անգամ մէկ մարդ էլ մնայ, *պիտի գործածի աւանդական ուղղագրութիւնը*: Իսկ եթէ նոյնիսկ Ասորիքի, Բաբելոնի, Փիւնիկների, Պարթեւների եւ դրացի միւս ազգերիների նման Հայաստանը նոյնպէս, Աստուած մի արասցէ, անհետանայ պատմութեան ասպարէզից, *ապագայ սերունդները հայոց գրաւոր արժէքային ժառանգութիւնը կարող են ուսումնասիրել միայն մաշտոցեան գրահամակարգով, որովհետեւ արեղեանասեւակեան ուղղագրութեամբ հնարաւոր չէ մի նոր աճառեանական եւ մալխասեանական բառարանագրութիւն ստեղծել եւ հասնել հնդերոպական հայրենիքի նախալեզուին ու քաղաքակրթութեան հիմքերին*:

Եզրակացնենք: Չպահպանելով աւանդական ուղղագրութիւնը եւ ընդունելով արեղեանական խեղագրումը, փաստօրէն նախադէպ է ստեղծուում յետագայում նոյնպէս պատմական կամ քաղաքական այլ առիթներով թոյլ տալու *ուզողին ուզածն անելու եւ լեզուն ըստ ճաշակի «շտկելու»*: Մեր խնդիրը պիտի լինի ո՛չ թէ փոխել եղած աւանդական մաշտոցեան հիմքով գրահամակարգը, այլ *պահպանել* շուրջ երեք դար առաջ Մխիթարեան հայագետների կողմից *կանոնարկուած*, ասորա-յունական, թաթար-մոնղոլական, արաբա-թուրքական եւ այլ *նուճոյների անհարկի, աւելորդ օտարաբանութիւններից մաքրուած մեր գրահամակարգը*: Մենք ազգովին խնդիր ունենք նաեւ այսօր շարունակելու մեր լեզուի մաքրումը՝ «զարգացած» միջազգային օտար եւ ռուսական չարդարացուած ներմուծումներից ու աւելորդաբանութիւններից, մերժելով տեղից ելնողի՝ ըստ կամս ուղղագրութիւն փոխելու եւ ապագայ հնարաւոր խեղաթիւրումներ կատարելու նկրտումները: Միաժամանակ համատեղ կերպով պէտք է լծուենք մեր լեզուի մէջ գրաբարից յետոյ միջին հայերէնից ու աշխարհաբարից, նաեւ բարբառներից գրական երկու լեզուաճիւղերի մէջ մտած *որոշ բառերի կանոնարկմանը եւ օտար անունների տառադարձմանը*՝ ապահովելու համար հայերէնի անխաթար շարունակականութիւնը՝ արմատներից չհեռանալու պայմանով:

Պատճառաբանութիւնները եւ առնուելիք քայլերը

Աւանդական ուղղագրութեան վերականգնմանը այսօր խանգարող հիմնական պատճառը *քարացած մտածողութեան*

կարծրատիպն է՝ արմատներին վերադառնալու եւ ազգայինի պահպանման ճանապարհը խոչնդոտողը:

--Այդ կարծրատիպը իր հիմքում ունի *«անգրագէտ մնալու» անհիմն մտավախությունը*: Մինչդեռ, եթէ մարդիկ ամենուրեք սկսեն կարդալ միայն դասական ուղղագրութեամբ, շատ արագ կը վարժուեն դրան: Հարկ է իմանալ 10-15 կանոն միայն:

--Այդ կարծրատիպը իր խորքում ունի *խնդրի նենգափոխում*: Դա կայանում է նրանում, որ մարդկանց մեծ մասը կարծում է, թէ *խօսքը իբր վերաբերում է պաշտօնական լեզու արեւելահայերէնը վերացնելուն, եւ արեւմտահայերէնի վերածելուն*:

--Այդ կարծրատիպը բխում է նաեւ *անտեղեակությունից*, երբ դասական ուղղագրութիւնը անուանում են *«արեւմտահայերէն ուղղագրութիւն»*, չմտածելով, որ մինչեւ 1922-ը, Իսահակեանը, Թումանեանը, Չարենցը, Տերեանը, Բաքիին կամ Շիրուանզադէն (բոլորն էլ՝ արեւելահայեր) գրել են արեւելահայերէնով, բայց միայն մեսրոպեան հիմքով միակերպ եւ միասնական դասական ուղղագրութեամբ: Շատերը չգիտեն, որ արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը մեր գրական լեզուներն են լոկ, ոչ թէ՝ ուղղագրութիւն են: Մինչդեռ մենք ունեցել ենք միայն մէկ՝ *համազգային աւանդական, միասնական ու միակերպ դասական ուղղագրութիւն*, եւ սոսկ վերջին 70 տարիներին էր, որ միայն Խորհրդային Հայաստանում պարտադրաբար անցան այդ խեղագրութեամբ՝ արեւմտասեւեակեան «նոր» ուղղագրութեանը:

--Այդ կարծրատիպը շեշտադրում է *նախկինում հրատարակուած գրքերը նորից տպագրելու* կարիքը եւ այդ դէպքում հնարաւոր *նիւթական մեծ ծախսերի անխուսափելիությունը*: Մինչդեռ, դրա կարիքը չկայ. որեւէ գործի անհրաժեշտ վերահրատարակման դէպքում միայն կարելի է տպագրել՝ այն էլ արդէն դասականով:

--Վերջապէս, այդ կարծրատիպը *պատճառաբանում է* երկրի *ներկայ պահի «աւելի հրատապ» հարցերի առկայությունը* եւ իշխանութիւնների զբաղուածութիւնը: Բայց *լեզուական հարցերի միջոցով է իրականանում ազգապահպանումն ու ինքնութեան հաստատումը, ազգային անվտանգութեան ապահովումն ու պետականութեան կայացումը, որովհետեւ լեզուն նաեւ երկրի պետական խորհրդանիշերից մէկն է եւ դրանից աւելի հրատապ հարց չի կարող լինել*: Լեզուական քաղաքականութեամբ են հզօրները ստրկացնում կամ ձուլում ժողովուրդներին: 1917-ի յեղաշրջումից յետոյ առաջին իսկ ամսուայ լենինեան երեք դեկրետները՝ խաղաղութեան մասին, հողի մասին եւ *լեզուի մասին*, ասուածի՝ լեզուի կարեւորութեան օրինակներից է:

Վերը նշուած անհիմն պատճառաբանութիւնները *կապ չունեն լեզուագիտական բացատրությունների հետ* եւ չեն կարող հերքել խեղագրութիւնը բարեփոխելու եւ դասականը վերականգնելու հիմնաւորման վերոյիշեալ 17 կէտերից ոչ մէկը: Այստեղ տեղին է յիշել կրթութեան եւ գիտութեան նախկին նախարար, իր ասպարէզի գործին լաւագոյնս տիրապետող եւ ազգային մտածելակերպով ղեկավարող Լեւոն Մկրտչեանի խօսքը, թէ՝ *մեր որոշ լեզուաբաններ մեր լեզուն ամբողջովին*

սեփականաշնորհել են (նա իրաւացի էր նաեւ համալսարանում գրաբարի, հին լատիներէնի ու հին յունարէնի ուսուցում սկսելու հարցում: Յունաստանում այսօր էլ դպրոցներում ուսանում են հին յունարէնը):

Մենք կարծում ենք, որ, *դասական ուղղագրութեան շտկման*՝ Գուրգէն Սեւակի սկսած գործը *շարունակելու եւ աւարտելու* համար, նախ պէտք է հրամանով այբուբենում վերականգնել **1- (վին)** տառը: Յետոյ կարելի է սահմանել ուղղագրութեան աստիճանական անցման ժամկետ (օրինակ՝ 1-2 տարի): Այդ ընթացքում *կը տպագրուեն ուղեցոյց գրքոյկներ, բառարաններ* (թէեւ արդէն նման գրականութիւն կայ), *կը կազմակերպուեն յատուկ դասընթացներ*՝ դրանցում ընդգրկելով բոլոր տեսակի լրատուամիջոցների՝ հեռատեսիլի ու համացանցի կայքէջների, մամուլի, նաեւ հրատարակչութիւնների ներկայացուցիչների խմբագրական կազմում աշխատող գոնէ մէկական սրբագրիչներ ունենալու համար: Պէտք է ամառնային արձակուրդների օրերին *կազմակերպել ուսուցիչների համար դասընթացներ* եւ հէնց նոյն ուսումնական տարին դասականի ուսուցումը սկսել առաջին դասարաններից: Միաժամանակ, սկզբնական շրջանում հարկ է, որ *թերթերի սիւնակներում եւ հեռատեսիլի յատուկ տեսաշարով հանրութեանը ներկայացուեն դասական ուղղագրութեան այն մի քանի կանոնները, որոնցով պէտք է ղեկավարուեն գրաւոր աշխատանքի դէպքում*: Կարելի է դպրոցներում եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում ուսուցումը սկսելուն զուգահեռ, թոյլատրել աւարտական դասարաններում կատարել զիջումներ՝ հին ուղղագրութեան գործածման դէպքերում: Իսկ «անգրագէտ մնալու» վախը 10 տարուայ կեանք ունի միայն. մինչեւ տասնեակ հազարաւոր պատանիներ կ'աւարտեն դպրոցը: Հին սերունդը կարող է դեռ կիրառել իր իմացած ուղղագրութիւնը (թէեւ մենք նկատել ենք գրագիտութեան ցածր մակարդակը ներկայ կեանքի բոլոր ոլորտներում): Չմոռանանք, որ Պետական համալսարանի արեւմտահայերէն բաժնի ուսանողները, Մանկավարժական համալսարանի «Մփիւռք» գիտաուումնական կեդրոնի ուսած եւ դասականը տիրապետած հարիւրաւոր շրջանաւարտները, հոգեւոր ճեմարաններում գրաբարի ուղղագրութիւնը իմացող ուսանողները եւ վերջապէս սփիւռոքի դպրոցները աւարտածները, կարող են լինել այն հիմքը, որով առաջին շրջանում կը ձեռնարկեն դասական ուղղագրութեան ուսուցման գործը: Միշտ ի մտի ունենանք հետեւեալը, որ
--մենք չենք դժուարանում տիրապետել օտար լեզուների,
-- մենք կարողանում ենք յաղթահարել բնագիտութեան, ֆիզիկայի եւ մաթեմատիկայի դժուարութիւնները,
--մենք ընդամենը պարտաւոր ենք տիրապետել մեր մայրենիի մի քանի կանոնների: Ֆրասիացիներն իրենց լեզուի դժուարութեան առթիւ ասում են. «Ֆրանսերէն դժուար լեզու է, այն գիտենալը մեծ պարծանք չէ, բայց *չգիտենալը շատ ամօթ է*»:
-- Ի վերջոյ յիշենք, որ 1922-1940թ.թ. ընթացքում Հայաստանում մարդիկ սկզբում գործածում էին դասական ուղղագրութիւնը,

յետոյ սովորեցին արեղեանական խեղագրութիւնը- իսկ յետոյ սովորեցին Գուրգէնսեւական տարբերակը՝ առաջին երկուսի խառնուրդով: Եւ մենք չենք կասկածում, որ, *եթէ արեղեանականը մնար առանց սեւական շտկումների, այսօր էլ մեր որոշ վայ լեզուաբաններ կ'ապացուցէին*, որ, օրինակ, *ճիշդ է գրելը՝ « Եշը վորքան է ուտում*: Մարտի 8-ը կանանց որն է: Յես յերեկ հիվանդ եյի: Եյական եր վորբին ոգնելը» եւայլն:

Մենք պատրաստ ենք քննարկելու խնդրոյ առարկայ այս հարցերի առթիւ լեզուական որոշ կանոնարկումների հարցեր, քայլելու համար դէպի առաջ, դէպի մեր արմատները:

Յանուն «Մեսրոպեան Ուխտ» լեզուապահպանողական միութեան՝

Կազմեց Նշան Որբերեանը

Յետգրութիւն –

Փակագծերի մէջ առնուած թուանշանները՝ (1)-(8), տեքստին կցուող եւ փաստող յաւելումներ են, որոնք, կարող ենք ներկայացնել հարցի քննարկումների ժամանակ:

ԱՄՆ, Ռոտ-Այլընտ

13 Յունիսի 2013

